ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

"13" փետրվարի 2023 թվական N 263-L

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 1319-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերի հաշվառման և պահպանման կարգը հաստատելու մասին» թիվ 1319-Լ հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հրամանի 2-րդ կետում «ձևը» բառը փոխարինել «ձևերը» բառով:

2) Հրամանի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սահմանել, որ սույն հրամանով հաստատված կարգը տարածվում է նաև Նախարարի կողմից ընդունվող ներքին (լոկալ) և անհատական իրավական ակտերի վրա, որոնց համար վարվում է առանձին գրանցամատյան՝ համաձայն Հավելված 2-ի Ձև 2-ի:»:

3) Հրամանի 6-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-րդ և 6.2-րդ կետեր.

«6.1. Սահմանել, որ սույն հրամանով հաստատված կարգը տարածվում է նաև Նախարարության գլխավոր քարտուղարի կողմից ընդունվող անհատական և Նախարարությանը ենթակա մարմնի ղեկավարի կողմից ընդունվող ներքին (լոկալ) և անհատական իրավական ակտերի վրա, որոնց համար վարվում են առանձին էլեկտրոնային գրանցամատյաններ՝ համաձայն Հավելված 2-ի Ձև 2-ի:

6.2. Սահմանել, որ սույն հրամանով հաստատված Հավելված 1-ի 3-րդ կետի 5-րդ, 6-րդ, 7-րդ ենթակետերով նախատեսված դրույթները կիրառելի չեն Նախարարի կողմից ընդունվող ներքին (լոկալ) և անհատական իրավական ակտերի, ինչպես նաև Նախարարության գլխավոր քարտուղարի կողմից ընդունվող անհատական և Նախարարությանը ենթակա մարմնի ղեկավարի կողմից ընդունվող ներքին (լոկալ) և անհատական իրավական ակտերի համար:»:

4) Հրամանով հաստատված Հավելված 1-ի 2-րդ կետում «(այսուհետ՝ Մատյան)» բառերից հետո լրացնել «՝ համաձայն Հավելված 2-ի Ձև 1-ի» բառերը:

5) Հրամանով հաստատված Հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի:

2. Հաստատել իրավական ակտերի գրանցամատյանի օրինակելի ձևը՝ համաձայն Հավելվածի:

2/11/2023

X

ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN ROBERT 4010840706

ՌՈԲԵՐՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Հավելված
Հայաստանի Հանրապետության
բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2023թ. փետրվարի 13-ի թիվ 263-Լ հրամանի

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի
2022թ. հոկտեմբերի 7-ի թիվ 1319-Լ հրամանի

Ձև 1

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

Հ/Հ	Իրավական ակտի հերթական համարը և տեսակը	Իրավական ակտի ստորագրման օրը, ամիսը, տարեթիվը	Իրավական ակտի վերնագիրը	Իրավական ակտի հրապարակման օրը, ամիսը, տարեթիվը	Իրավական ակտի ուժի մեջ մտնելու օրը, ամիսը, տարեթիվը	Իրավական գործողության դադարեցման օրը, ամիսը, տարեթիվը	Այլ նշումներ

Ձև 2

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

Հ/Հ	Իրավական ակտի հերթական համարը և տեսակը	Իրավական ակտի ստորագրման օրը, ամիսը, տարեթիվը	Իրավական ակտի վերնագիրը	Այլ նշումներ

»: